


1 + 1



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԹԵՐԹ 27 մարտի 2019 թ. թիվ 2 (2)

ՎԱՐՊԵՏ ՎԱՉԱԳԱՆԸ



ցած պատուհաններից մեկը պոկեց եւ տարավ:

Պապս գնաց, որ վարպետ Վաչագանին բերի, որ պատուհանի չափսը վերցնի՝ նորը սարքելու համար: Ես ուղեկցեցի պապիս: Շատ ուրախացա, որ առիթ ունեցա՝ ծանոթանալ Վաչագանի /Վլոյի/ հետ:

Դեռ չհասած նրանց տանը՝ արդեն լսվում էին տարբեր հաստոցների ձայները:

Իրեն հատուկ բարի ժպիտով մեզ դիմավորեց Վաչագանը: Նա իմ մեջ տպավորվեց որպես բարի, իմաստուն, կշռադատված, եր-

հարցրի .

-Պապի՛կ, ի՞նչ եք անում հին ներկերից ճաքճաք այս պատուհանները:

Նա իրեն հատուկ ձեռով ժպտաց եւ պատասխանեց.

- Բալե՛ս, եթե մենք չսովորենք նորոգել այն, ինչը որ կարելի է նորոգել, երբեք հալի չենք հասնի:

Ես ականալից հիշեցի մեր դպրոցի պատուհանները...

Ես պատկերացրի, որ պատուհանների վերանորոգման աշխատանքը նման է նկարչի աշխատանքին: Եվ գրույցի ընթացքում նա նշեց, որ իր երազանքը նկարիչ դառնալն էր:

Կարելի է ասել՝ հասել է երազանքին, քանի որ փայտագործ դառնալու համար նկարչի անսահմանափակ երեւակայություն եւ անսպառ էներգիա է հարկավոր, իսկ նա դրանցից անսահմանորեն ունի: Նա ասում է, որ ինքը փայտագործ չէ, քանի որ փայտագործ ասվածը վերացական հասկացություն չէ, այլ պետք է զգաս, եւ փայտն էլ անշունչ մարմին չէ, նրա հետ պետք է վերաբերվես հնարավորինս նուրբ: Նրան նույնիսկ նախնական գծագրեր էլ պետք չեն. չէ որ իսկական փայտագործի ձեռքում փայտն ինքնին

դառնում է այն, ինչ կար վարպետի մտքում:

Վաչագան պապիկը խորհուրդ է տալիս՝ հաջողության հասնելու համար ամեն ինչին մոտենալ մասնագիտորեն:

Այժմյան երազանքներից մեկը թոռներին սեփական արհեստը փոխանցելն է, եւ նա այդ նպատակը համարում է իր կյանքի առաքելությունը ու համոզված է, որ անպայման թոռներից զոնե մեկին կհետաքրքրի պապի արհեստը:

**Մերի Գրիգորյան
8-րդ դասարան**



Մեր գյուղը գտնվում է ծովի մակարդակից 2000 մետր բարձրության վրա, մենք սովոր ենք շուտ փոփոխվող ձյանը, անձրեւին եւ արեւին: Երբ որ ապրում էինք մեր հին տանը, մի օր այնպիսի ուժգին քամի բարձրացավ, որ բաց մնա-

ջանիկ մարդ:

Երբ մենք գտնվում էինք արհեստանոցում, տեսանք, որ մեծ սեղանի վրա դրված էր մի հին պատուհան, իսկ բոլոր պատերից կախված էին տարբեր գործիքներ: Ես

ԿԱՆԴՈՒՆ ՏԱՏԻԿԸ



Երբ մենք բարձրանում էինք դեպի հին դպրոց, մտքումս կրկնում էի այն հարցերը, որոնք պետք է տայի Կանդուխ տատիկին: Կարծես արդեն հերթականությունն էլ որոշեցի, երբ արդեն մոտենում էի տանը, որտեղ ապրում էր Կանդուխ տատիկը, հանկարծ կանգնեցի, որպեսզի հավաքեմ մտքերս, դուռը բացվեց, ճիշտ կլիներ ասել, քանու ուժգնությամբ, եւ դուրս թռան երեխաներ՝ ճչալով ու վազվզելով իրար հետեւից: Մենք ուզում էինք դուռը ծեծել, բայց քանի որ դուռը

բաց էր, ներս մտանք: Մեզ դիմավորեց մի ծեր կին՝ փայլուն աչքերով, ժպիտը երեսին, մի քիչ կռացած՝ մեզ ասելով .

-Ներս համեցեք, բալե՛ք ջան, ու՛ն թոռներն եք:

Մենք պատմեցինք Կանդուխ տատիկին մեր մասին, որ ուզում ենք շնորհավորել իր մայրության եւ գեղեցկության տունը՝ մարտի 8-ը, քանի որ ինքը գյուղի տարեց կինն է:

Կանդուխ տատիկի երեսին նկատեցինք թախիծ. երեւի հիշեց իր հասակակիցներին, եւ աչքերին

երեւացին արցունքի կաթիլներ: Հանկարծ դուռը նորից շրխկաց. երեխաները քանու արագությամբ նորից ներխուժեցին սենյակ, պատվեցին տատիկի շուրջը եւ անհետացան: Այդ ժամանակ նկատեցինք, որ տատիկի աչքերը նորից փայլեցին, լցվեցին ջերմությամբ եւ կարոտով. աչքերով ուղեկցեց երեխաներին. կարծես մոտվի պաշտպանում էր ինչ-որ բանից:

Մենք երկար խոսեցինք նրա ապրած տարիների, լավ ու վատ օրերի, դժվարությունների, երջանիկ անցկացրած օրերի մասին: Կանդուխ տատի կյանքը այնքան նման էր մեր գյուղի շատ տատիկների կյանքին, որ կարծես ինձ թվաց, թե այդ պատմությունը արդեն լսել եմ:

Երբ արդեն հրաժեշտ էինք տալիս, մի ականաթ եւ ինձ պատկերացրի նրա փոխարեն:

Հանկարծ ուրախությամբ լցվեց սիրտս, հասկացա ժամանակի տարբերությունը: Բայց, միեւնում էր, ինչ-որ բան իմ մեջ փոխվեց, ինձ թվաց, թե ես իմաստուն դարձա՝ շփվելով Կանդուխ տատի հետ: Մյուս օրը, երբ առավոտյան արթնացա եւ որոշեցի նյութը ամփոփել եւ հանձնել ընկեր Հակոբյանին, հանկարծ զգացի՝ ինչ ջերմությամբ էր ինձ նայում Կանդուխ տատիկը՝ կարծես ասելով՝ դուք եք մեր եր-

ջանկությունը:

Քանի որ մեր թերթը լույս է տեսնում մարտի վերջին, ինձ հնարավորություն տրվեց ամփոփել տեքստը: Մայրս զարմանում էր, որ վերջերս շատ եմ սկսել խոսել իր եւ տատիկիս հետ: Ոչ մի համակարգիչ չի տա այն ջերմությունը, որ ստանում ենք մեր տատիկների ու պապիկների հետ անմիջական շփումից:

**Քրիստինե Սարգսյան
9-րդ դասարան**





Նկարի հեղինակ՝ Աննա Գեւորգյան

ՄԱՅՐՍ

Այս աշխարհում
ամենից թանկ
իմ մայրիկն է շատ
բարի,
Միշտ ժպտադեմ,
միշտ երջանիկ,
Ասես ոչ մի հոգս
չունի:
Նա տալիս է շատ
խորհուրդներ,
Միշտ օգնում է ինձ
կյանքում,
Ինչքան էլ որ սխալ
լինեմ,
Երբեք նա ինձ չի
սաստում:
Ու այս կյանքում ուր
էլ գնամ,
Ինչ ճամփով էլ որ

անցնեմ,
Միեւնույն է, մորս համար
Միշտ սիրելի կլինեմ:

ՄԱՂԹԱՔ ՄԱՅՐԻԿԻՍ

Այսօր տոն է ողջ աշխարհում,
Մա՛յր իմ, ես քեզ շատ եմ
սիրում:
Մարտի ութը շնորհավոր,
Դու միշտ ժպտա, ինչպես
այսօր:
Ցանկանում եմ անամա
երկինք
Ու գարուններ լուսավոր:

Մա՛յր իմ, դու իմ
երջանկություն,
Եղի՛ր հավերժ իմ կողքին:
Ես չեմ ուզում շատ բան
կյանքից,

Ունեմ փոքրիկ մի
ցանկություն՝
Ամեն տարի մարտի ութին,
Քեզ գրկեմ, տամ ջերմ
համբույր:



Գարսեւան Սարգսյան
9-րդ դասարան

ԱՆԽԱՐՀՆ ԻՄ ԱՉՔԵՐՈՎ



Չմռանը, երբ բուք է լինում մեր
գյուղում, պատահում է այնպես, որ
տեխնիկական պատճառներով մի
քանի օր էլեկտրականությունը բա-

բնություն ունի այն:
Պատահում է՝ ծագում են թեմա-
ներ այս կամ այն երկրի մասին: Ես

ցակայում է: Մեր տանը
այդ օրերին տաք է,
քանի որ վառարանում
փայտ է վառվում, գազ
կա, իսկ իրիկունը մոմ
կամ լամպ ենք վառում:
Ինձ դուր են գալիս այդ
օրերը. դաս չենք սովոր-
ում, ոչ հեռուստա-
ցույցն է աշխատում, ոչ
էլ հեռախոսը:
Եվ երեկոյան, երբ
ավարտում ենք առօր-
յա գործը, հավաքվում
ենք սեղանի շուրջ ընթ-
ելու: Ծայր է առնում
գրույց՝ տարբեր թեմա-
ներով:
Պապս պատմում է,
թե խորհրդային /սովե-
տական /տարիներին
բանակում որտեղ է ծա-
ռայել, հայրս պատմում
է Ղարաբաղի մասին,
թե ինչքան գեղեցիկ
բնություն ունի այն:
Պատահում է՝ ծագում են թեմա-
ներ այս կամ այն երկրի մասին: Ես

զգում եմ իմ առավելությունը, քանի
որ ոչ միայն լսել եմ պետություննե-
րի մասին, այլև աշխարհագրու-
թյան դասերից սովորել շատ բա-
ներ:
Մենք ունենք աշխարհի փոքրիկ
քարտեզ: Երբ ուզում եմ երագել,
մոտենում եմ քարտեզին եւ մտովի
ճամփորդում Զնդկաստան, Ֆրան-
սիա, Աֆրիկա... Երբեմն երագներ
եմ տեսնում, թե իբր Իսպանիայում
եմ, Անտարկտիդայում: Երեկ վեր
թռա քնից, որովհետեւ երագում
չէի կարողանում խոսել իսպանե-
րեն: Ես մտածում եմ, որ պետք է
իմանանք մի քանի լեզու, իսկ դրա
համար հարկավոր է լինել աշխա-
տասեր եւ լավ սովորել:
Վերջերս կարդացի, որ Եթովպի-
այի այբուբենի մեջ կան հայկակա-
նին նման տառեր: Մեծ ցանկություն
ունեմ, որ մեծանամ եւ ուսումնա-
սիրեմ այդ փաստը:
Ինձ թվում է՝ ինչքան շատ իմա-
նամ մեզ շրջապատող ժողովուրդ-
ների մշակույթի ու պատմության
մասին, այնքան շատ հնարավորու-
թյուն կունենամ ամեն տեղից վերց-

նել լավը եւ դիմակայել վատին:
Ես սիրում եմ Հայաստանը, այն
իմ հայրենիքն է, իմ ծննդավայրը,
բայց Հայաստանը աշխարհի մի
փոքրիկ մասնիկն է: Եվ ես մեծ ցան-
կություն ունեմ իմանալ աշխարհի
տարբեր պետությունների, ազգերի
մշակույթն ու պատմությունը, կեն-
ցաղն ու բարքերը:

Ալլա Աբրահամյան
10-րդ դասարան



Ո՛Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մեծ խաչատուրը, ով Միքայելի
որդին էր, իսկ նրա հայրը՝ Աղա Սմ-
բատը, որի պապն է եղել Տեր Մխի-
թարը, սկզբնական շրջանում բնակ-
վել է Նորատուսում: Պարոն խաչա-
տուրը կիրթ մարդ է եղել, եւ նրան
անվանել են նաեւ Կապուտենց: Մի-
քայելը հարկային տեսուչ է աշխա-
տել, իր պաշտոնից ելնելով՝ կրել է
վերարկու, որը բերվել էր արտա-
սահմանից, եւ շրջանում միայն նա
էր հագնում: Կապուտը թուրքերեն
բառ է, որը նշանակում է վերարկու,
եւ նրան թուրքերեն անվանել են
«կապուտով մարդ»: Միքայելը ու-
նեցել է երեք որդի՝ խաչատուրը,
Կարապետը եւ Վարդանը:
1828 թվականին Կարապետը եւ
Վարդանը գաղթել են Կիլիկիա: Իսկ
խաչատուրը ամուսնացել է նորա-
տուսի Թադեւոսյանի աղջկա հետ:
Նազար Դավիդովը, ով այդ ժամա-
նակ Բաշքյանդի /Գեղարքունիքի/
ռեսն էր, հանդիպում է խաչատուրին եւ նրան
խնդրում, որ տեղափոխվի Բաշքյանդ՝ ապրե-
լու: Խաչատուրը այցելում է գյուղ եւ տեսնե-
լով, որ հողատարածքները ավելի մեծ են եւ
բերքատու, ընտանիքով տեղափոխվում է: Տու-
նը կառուցում է լեռան ստորոտին, ստեղծում է
հարմարավետ միջավայր ապրելու համար,
ունենում է 7 երեխա՝ 5 աղջիկ, 2 տղա: Աղ-
ջիկները գյուղից դուրս են ամուսնանում: 2 որ-
դիների՝ Ղազարի եւ Գրիգորի ժառանգները
մինչեւ օրս ապրում են իրենց ծննդավայրում:
Ղազարը ունենում է 6 երեխա՝ 3 աղջիկ, 3
տղա՝ Հայրապետը, Կարապետը եւ Ավետիսը:
Ավետիսը մահանում է հայ- թուրքական պա-



տերազմի ժամանակ, Հայրապետը ունենում է
մեկ տղա եւ մեկ աղջիկ: Արսենը Հայրապե-
տի որդին, ունենում է 8 երեխա. տղաներն
էին Լեւիկը /Գրետը/, Շալերմանը, Արտուշը,
Արշավիրը: Արսենը 26 տարեկանում Մուխա-
նում /այժմ՝ Ծովազարդ/ նշանակվում է կուլխո-
գի նախագահ: 28 տարեկանում աշխատում է
Նորատուսում: Որդիներից Շալերմանը երկար
տարիներ աշխատել է Գեղարքունիքի միջնա-
կարգ դպրոցում եւ վայելել համագյուղացինե-
րի սերն ու հարգանքը: Արտուշը ապրում է Լոս
Անջելեսում, Արսենի որդիներից միայն Լեւիկն
/Գրետ/ է մնացել գյուղում եւ շարունակում է
պապերի արհեստը՝ քարտաշությունը: Վար-
պետ Գրետը սիրում է կրկնել. «Արհեստը չեն

սովորում, այլ ծնվում են արհեստա-
վոր»: Նա սիրում է իր գործը եւ իրեն
չի պարտկերացնում առանց դրա:
1958 թվականից սկսած՝ նա զբաղ-
վում է քարտաշությամբ՝ եւ սովորե-
լով վարպետ Ստեփանի մոտ, իսկ իր
գլխավոր գործերից է 1979 թվակա-
նին կառուցած Սբ. Հակոբ եկեղե-
ցին: Վարպետը նշում է, որ այն սկ-
սել է կառուցել հոր օգնությամբ եւ
ավարտել թոռների հետ: Գրետը ունի
չորս երեխա, գյուղում ապրում են
նրա երկու երեխաները՝ Ավետիսը եւ
Մանուշակը /Աննան/:
Կարապետից սերում են Գյուլաբը,
Սոսինը, Մեխակը եւ Աշոտը: Գյուլա-
բը ունենում է մեկ որդի՝ Միշան, Միշ-
ան ունենում է 4 երեխա՝ 2 տղա, 2
աղջիկ, որոնցից 3 երեխաները՝ Ռա-
ֆիկը, Վազգենը եւ Թամարան,
իրենց ժառանգների հետ բնակվում
են գյուղում:
Սոսինի երեխաներից միայն Դա-
վիթն է ապրում գյուղում՝ իր ժառանգների հետ:
Գուրգենի որդիներն էին խաչատուրը եւ Գեւ-
որգը, խաչատուրը ունի մեկ որդի՝ Արշավիրը,
որը երկար տարիներ աշխատել է գյուղում որ-
պես ուսուցիչ, այնուհետեւ՝ որպես տնօրեն:
Գեւորգը ունի 3 որդի՝ Սերյոժան, Վալդը եւ
Վեմիրը: Սերյոժայի որդիները եւ նրանց ժա-
ռանգները բնակվում են գյուղում: Կապուտեն-
րի ազգությունը գյուղում կրում է երկու ազգա-
նուն՝ խաչատուրի անունով՝ խա-
չատրյաններ եւ Ղազարի անունով՝
Ղազարյաններ:
Սյուզաննա Կարապետյան
11-րդ դասարան

Ցերեկը մեր գյուղում, երբ արել է անուշ, միշտ էլ տաք է, եւ ծյունը հալվում է։ Մարտ ամիսը գարնան սկիզբն է։ Գարնան օրերն ի՞նչ սիրուն են, ի՞նչ պայծառ։ Իմ արեւաշող գարուն, դու լույս ես վառում մեր հոգիներում, արեգակի շողերով ջերմացնում ամեն քար ու քուփ։ Նոր շունչ ու եռանդ ես քեզ հետ բերում մի նոր թարմությամբ, նոր երազանքներով մեր հոգին լցնում։ Գարուն, դու խինդ ու ծիծաղ ես մարդկանց պարգևում։

Սովոր լինելով ծնունդ երկու գույների՝ սեւ եւ սպիտակի, իմ աչքերը



եւ ականջները գարնանը սպասում են նոր գույների եւ թռչունների ծայների։ Շատերի պես ես էլ անհամբեր սպասում եմ գարնան գալուն։ Իմ գյուղը մի յուրօրինակ գեղեցկությամբ է պարուրվում, երբ շուրջբոլորը կանաչ գույնով է ներկվում։ Գարնան զարթոնքը հեքիաթային է դարձնում իմ գյուղը, երբ արթնանում է բնությունը։ Գյուղի կենտրոնով հոսում է Գավառագետը, որի խշշոցը, առվակների քչքչոցը, թռչունների ծվվոցը նոր շունչ են հաղորդում շրջապատին։

Պապս պատմում էր, որ գետում առաջ ծուկ կար, իսկ ջուրը այնքան մաքուր էր, որ այն օգտագործում էին լվացքի եւ անասունների համար։ Ամռանը մեր գետը համարյա ցամաքում է, բայց գարնանը առատ ձնհալը նպաստում է, որ գետը դառնա ջրառատ, իսկ արելի ջերմ շողերից իր սպիտակ վերմակից ազատվում է փոքրիկ ու քնքուշ ծաղիկը՝ ձնծաղիկը, եւ իր սիրունիկ աչիկներով ավետում է գարնան գալը։ Ինձ պես շատերը շտապում են այդ փոքրիկ հրաշքը պոկել՝ հաղթահարելով դաշտային ցեխոտ ճանապարհը, եւ այն նվիրել մայրերին, քույրերին, սիրելի ընկերուհիներին։

Գարնան ծաղկունքին անհամբերությամբ սպասում է շինականը,



Նկարի հեղինակ՝ Աննա Գեղորյան

որ սիրով ու նվիրվածությամբ սկսում է հողից հաց քամել, բարիքներ ստեղծել։ Ինձ համար գարունն իմ գյուղում աննկարագրելի գեղե-

ցիկ է. այն նոր կյանքի սկիզբ է, նոր երազների այգաբաց։

Հակոբ Հակոբյան
9-րդ դասարան

ԾԱՌԱՅՈՒՄ ԵՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ



Տիգրան Հակոբյան



Լյովա Ավագյան

Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն ու աշակերտները շնորհավորում են նույն դպրոցի շրջանավարտներ, այժմ Հայոց բանակի զինվորներ Լյովա Միսակի Ավագյանին եւ Տիգրան Հայկի Հակոբ-

յանին՝ ծննդյան օրվա առթիվ։ Մենք հպարտ ենք, որ մեր գյուղացիները պատվով են կատարում իրենց պարտքը։ Ցանկանում ենք անփորձանք ծառայություն եւ բարի վերադարձ։

ԳԱՐՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՄԱՐԴՈՒ ՀՈԳՈՒՄ

Դարձյալ գարուն է, նոր կյանքի նոր զարթոնքի սկիզբ։ Գարունը եկավ, որ հիշեցնի բոլորիս՝ կյանքին նայել վառ գույներով։ Մեր գյուղում գարունը դժվար է մուտք գործում. կռիվ է տալիս, պայքարում, որպեսզի ձմեռը զիջի իր դիրքերը։ Գարնանային բույր ու շունչ կա օդում։ Գարունը սեր է, հոգու երգ, մի ամբողջ կյանք՝ նոր ու պայծառ գույներով։ Նրա բնքությամբ ողջ բնությունը արթնացել է խոր քնից։ Ցուրտ ու մռայլ ձմռանը փոխարինելու է եկել լուսավոր գարունը։ Արթնացել է բնությունը եւ երազանքի ժպիտներ է շռայլում իրեն ողջունող մարդկանց։ Ամպերի տակից դուրս է եկել երկար սպասված արեւը եւ իր տաք ու ջերմ շողերով ջերմացնում է մեր սրտերը։ Գարնան գալստյան մասին մեզ առաջինը հայտնում է կապուտաշյա փոքրիկ ձնծաղիկը, որը բացվում է ուղղակի ձյան մեջ ու համարձակորեն ժպտում բոլորիս։ Ճանապարհների ձյունը հալվում է եւ հոսում հորդառատ առուներով։ Դաշտերը ամբողջովին ծածկվում են երկնադրանգ ծաղիկներով։ Ծառերը բողբոջում են, եւ ծաղկում են գարնանային ծաղիկները՝ մարգագետիններն ու դաշտերը ծածկելով վառվուն գույներով։ Մարդկանց բակերում ծաղկում է յասամանը, իմ ամենասիրելին ծաղիկների մեջ,

տարածելով իր բույրը թովիչ։ Աշխուժանում են կենդանիները, ամենուրեք լսվում է թռչունների զվարթ ծվլոցը, որը նոր տրամադրություն է հաղորդում աշխարհին։ Գարունը յուրաքանչյուրին մղում է՝ խորհելու բնության հրաշալիքների ու գեղեցկությունների մասին։ Այն վերափոխում է եւ բնությունը, եւ մարդու միտքն ու հոգին։

Հնարավոր չէ հավերժացնել բնության գարունը, բայց միշտ եւ ամենուրեք կարելի է պահպանել մտքի ու սրտի գարունը։ Այն մարդիկ, ովքեր անընդհատ գարուններ են ստեղծում իրենց հոգում ու սրտում, նրանք միշտ գարնան պես թարմ են, կենսուրախ ու խանդավառ։ Ուստի մարդը պետք է գարնան հավերժությունը կրի իր հոգու մեջ։

Լուսինե Գրիգորյան
11-րդ դասարան



ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ



2018-2019 ուստարում սովորողների գիտելիքները եւ կարողությունները ստուգելու նպատակով դպրոցում անցկացվեցին դպրոցական օլիմպիադաներ՝ երկու եղանակով՝ online՝ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Քիմիա» եւ «Կենսաբանություն», իսկ «Հայոց լեզու», «Գրականություն», «Պատմություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Հայոց եկեղեցու պատմություն» եւ «ՆՁՊ» առարկաների օլիմպիադաների առաջադրանքները կազմվեցին մեթոդիավորումների կողմից՝ չափորոշ-

չային պահանջներին համապատասխան։ Դպրոցական փուլին մասնակցել են 50 աշակերտներ, որոնցից մարզային փուլ են անցել 7 աշակերտ. 4 աշակերտ՝ աշխարհագրությունից, 2-ը՝ մաթեմատիկայից, 1-ը՝ քիմիայից։

Սակայն ի տարբերություն անցած տարվա՝ այս տարի չունեցանք մարզային փուլի հաղթող եւ հանրապետական փուլի մասնակից։ Բայց այդ փաստը մեզ չի ընկճում, եւ մենք ոգետրված մասնակցելու ենք «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային մրցույթին եւ լիափուլ ենք, որ կունենանք լավ արդյունքներ։

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՆԱԲԱԹ



Մարտի 5-ին Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում անցկացվեց Ամենայն հայոց բանաստեղծ մեծն թուրքականի 150-ամյակին նվիրված ցերեկույթ: Ցերեկույթին մասնակցեցին 1-4-րդ դասարանների աշակերտները:

1-ին դասարանցիները արտասանեցին թուրքականի մանկական բանաստեղծությունները: Բենականացրին «Երկինքը փուլ է գալիս» հեքիաթը: Փոքրիկները իրենց պարտքը համարեցին նորից հիշեցնել հանձարեղ լոռեցու խոսքը:

Գործն է անմահ, լավ իմացեք, Որ խոսվում է դարեդար, Երենկ նրան, ով իր գործով Կապրի անվերջ, անդադար:

Դա առաջին հերթին թուրքականի գործի անմահության առիավատյան է, քանի որ այսօր էլ, 150 տարի իր ծնունդից հետո, առաջին դասարանցիների շուր-

թերից հնչում է պոեմի նախերգանքը ու աշխարհին հիշեցնում լավ ու վատ գործերն ու արարքները գովաբանելու եւ փնտելու արվեստը:

3-րդ դասարանի աշակերտները ներկայացան թուրքականի հեքիաթների հերոսների կերպարներով: Ցերեկույթին ներկա էր նաեւ մեծն թուրքականը, որը հանդես եկավ միջոցառման ավարտին, զրուցեց հերոսների հետ, նրանց դիմեց իր խրատական խոսքերով: Ցերեկույթը հետաքրքիր էր, բազմաբովանդակ, հեքիաթա-

յին վառ կերպարներով: Ցերեկույթը ունկնդիրներին մեծ բավականություն պարգևեց, իսկ աշակերտները ուրախ էին եւ ոգեւորված:

4-րդ դասարանի աշակերտները ընտրել էին, «Ամեն հասակ իր թուրքականն ունի» խորագիրը: 4-րդ դասարանի աշակերտները ցանկություն հայտնեցին հանդես գալ այս հմուտ, հանձարեղ լոռեցու հեքիաթների կերպարներով: Երաժշտության ներքո բեն բարձրացան թուրքականի գրական հերոսները: Նրանք մարմնավորել էին, «Քաջ Նազարը» հեքիաթի հերոսներին: Աշակերտների դերասանական ձիրքը, ասմունքը, հեքիաթին բնորոշ հագուստները, բենի հարուստ եւ հետաքրքիր ձեւավորումը, ուրախ երգն ու պարը պարգևեցին հաճելի պահեր եւ բարձր տրամադրություն:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍ



Դասղեկի ժամին մեծ ոգեւորությամբ էին նախապատրաստվել Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի 4-րդ դասարանի աշակերտները: Նրանք դասի համար ընտրել էին հետաքրքիր խորագիր՝ «Հայաստանի ճամփեքով»: Դասն անցկացվեց դասարանում: Դասարանը կահավորված էր Հայաստանի եւ մարզերի քարտեզներով, եռագույն դրոշով ու գինանշանով, եռագույն փուլիկներով: Նրանք իրենց ճանապարհորդությունը սկսեցին Գեղարքունիքի մարզից՝ իրենց ծննդավայրից եւ հասցրին Արցախ աշխարհ: Հայրենասիրությունն էր խոսում նրանց մեջ. նրանք հետաքրքրությամբ ու ոգեւորությամբ էին ներկայացնում Հայաստան աշխարհը: Ճանապարհորդության միջոցով ճանաչեցին մեր հայրենի բնաշխարհը, պատմամշակութային կոթողները: Դասի նպատակն էր՝ մոտ լինել հայի ինքնությանը եւ սիրել այն, հասկանալ՝ ինչ ավանդ ենք ստացել մեր նախնիներից, գիտակցել, որ իրենցից յուրաքանչյուրը առաքելություն ունի՝

սրբությամբ պահել-պահպանել հայոց հողը: Իմացան, որ հայրենիքը մեր պապերից ժառանգած հողն է, մեր խաչքարերն ու եկեղեցիներն են, որոնցից շատերի կիսաքանդ եւ կիսավեր մնացուկները համր ու լուռ վկաներն են մեր հարուստ մշակույթի:

Երեխաներն իրենց եզրափակիչ խոսքում ներկայացրին, որ Հայաստանը մենք ենք, մենք ենք նրա ապագան, նրա շենացնողն ու պաշտպանը: Երեխաները երգում էին հայրենասիրական երգեր եւ բռնում շուրջպար: Տոնական տրամադրությունը, երգն ու պարը հայրենասիրական վեհ զգացմունքներ արթնացրին ոչ միայն աշակերտների, այլեւ հանդիսատես ծնողների, ուսուցիչների մեջ: Երեխաները որքան ճանաչեցին մեր հայրենիքը՝ չափը չգիտեմ, միայն մի բան հաստատ գիտեմ, որ Հայաստանը նրանց մեջ է, նրանց արյան ու մարմնի մեջ, իրենց մայրիկների աչքերում, աղոթքի մեջ, դպրոցի, ընկերների մեջ, իրենց գյուղում, դաշտերում, նույնիսկ նրանց չարածճի աչքերում, խաղերում:

Դասվար եւ ՄՄ Մախագահ՝
Անահիտ Ավետիսյան



ՓՈՔՐԻԿ ՆԿԱՐԻՉԸ



Ես Լուսինե Առաքելյան եմ, 13 տարեկան, սովորում եմ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցում, սիրում եմ նկարել եւ անսահման երեւակայել: Իմ նկարներից մի քանիսը հանձնում եմ թերթին եւ հույս ունեմ, որ կընդլայնեմ իմ ստեղծագործական շրջանակը ու կունենամ իմ նկարների ցուցահանդեսը:

Լուսինե Առաքելյան
7-րդ դասարան



Հարգելի՛ համագյուղացիներ, մենք հույսով ենք, որ մեր թերթը ձեզ դուր է գալիս: Որպեսզի թերթը լինի բովանդակալից եւ շոշափի այն ամենը, որով ուզում ենք դաստիարակել մեր երեխաներին եւ ուղղորդել նրանց՝ ապագայում կյանքի ճիշտ ճանապարհ եւ մասնագիտություն ընտրելու:

Սպասում ենք ձեր ակտիվ արձագանքին. գրեք մեզ:

Հարգանքով՝ Գեղարքունիքի միջնակարգ դպրոցի «1+1» դպրոցական թերթի խմբագրություն:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 03. 2019 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝
Ռոզա Հակոբյան
Տպաքանակը՝ 500
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru

4